թՁ. ՏԱՐԻ Թիւ 302 — ՆՈՅԵՄԲԵՐ 26 / 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1897 — 13 ՐԷՃԷՊ 1315 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

غزتهسی ادارهخانهسنه (ماسیس) ...

Նամակ կամ որ եւ իցէ զրութիւն պէտք է ուղղել Ձեռ Խմբագրութիւն

ՄԱՍԻՍ ՕՐԱԳՐՈՑ

Գ. ՊՈԼԻՍ ՂԱԼԱԹԻԱ, Նորատունկեան խան

Direction du Journal "MASSIS,,
Galata, CONSTANTINOPLE

Les annonces sont reçues aux Bureaux du journal

ՄԱՍԻՍ

ԼՐԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. Պոլսոյ եւ Օտար Տարիներու դրկն. արժ.			75
» » Վերադարձով	»	»	40
Գալատայի եւ Պարտէզի	»	»	100
» » Վեցամսեայ	»	»	50
» » Եռամսեայ	»	»	25
Օտար երկրի » Տարեկան	Ֆրանք		25
Ռուսիոյ » »	Ռուբլի		10

Դրամի փոխարէն փոստային փուլ կընդունուի. 115 դրուշի փուլը 100 դրուշի հաշուով:

10 ՓԱՐԱ — **ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ** — **10 ՓԱՐԱ**

ԴԱՍԱԿԱՆԸ ԵՒ ՎԻՊԱԿԱՆԸ

Մեծերուն և պզտիկներուն յաւիտենական խնդիրն է այս. միայն մատենագրական ասպարէզին մէջ չէ որ դասականն ու վիպականը պայքար կը մղեն. ընկերութեան կազմակերպութեան մէջ ալ հինին ու նորին կռիւը մատենագրութեան դասականը և վիպականը կը յիշեցնեն։ Նորերը հիներուն չեն հաւնիր, ինչպէս նոր ոճը հինին հակառակիլ կուզէ։ Երկու մեծ խնդիրները իրարմէ տարբերութիւն չունին. երկուքն ալ խառնուածքի գործ է. նորերն կան որ հիներուն կողմը երթալ չեն ուզեր, միշտ իրենց առջև կը նային, եւ նայիլը յեսադիմութիւն կը նշանակէ այդպիսիներուն համար։ Բայց կարծենք թէ այդպէս կարծողները եթէ հաճին քիչ մը մեղի հետ քանի մը լուրջ խորհրդածութիւններ ընել, պիտի համոզուին թէ եաեւ նոյնիլ յիմարութիւն չէ բնաւ, ազգերու իմաստութիւնը և խելամտութիւնը ամենէն աւելի իրենց անցեալին մէջ կը ցոլան. պատահարներ՝ վիչտեր՝ ուրախութիւններ՝ երջանկութիւններ ամենէն աւելի իրենց անցեալին մէջ խտացած են, և անոնց նկատողութիւնը բնաւ վնասակար և յեսադիմական չէ այն նոր սերունդին համար՝ որուն նշանաբանն է զարգացումն կարելի՞ է միթէ երեսի վրայ թողուլ հին աւանդութիւնները, որոնց ծոցին մէջ փոխ առնուելիք բարոյական շատ բաներ կան, դարերու խորաքնին ուսումնասիրութիւններու արդիւնք, որոնք յառաջդիմութեան հիմնաքարերն ըլլալու պատրաստուած են։ Դէպի հինը անդրադարձութիւն մը բրնաւ խոտելի հանգամանք մը չէ այն նորերուն համար՝ որոնց իսկ ալն է հինին անկանոնութիւնները բառնալ եւ նորագոյնը հաստատուն խարիսխներու վրայ դնել։ Կարելի՞ է արհամարհել և չնչին քանակութիւն մը համարել այն բազմաձայն և ճոխ աւանդները՝ զոր հինները կտակած են մեղի։ Ամեն նորութիւն պէտք է ցոլացնէ անցեալը, որուն արդէն ինք ուրիշ բան չէ բայց եթէ կատարելագործութիւնը։ Բաղդատութիւնը դատողութենէն վերջը կուգայ, բայց մտքին անհրաժեշտ գործողութիւնն է, և այդ բաղդատութիւնն ալ չկրնար ըլլալ առանց հինը նկատողութեան առնելու։

Պզտիկները աւելի դիւրաւ կրնան ըմբռնել մեր ըսածը. անոնք հիմա կատաղի կռիւ մը կը մղեն հին գրականութեան դէմ։ Մեր վարժարաններուն աշակերտները հայ մատենագրութենէն գրեթէ բան մը չեն ճանչնար. հազիւ թէ քանի մը նմոյշներ, որ ծաղկաքաղերու մէջ ամփոփուած են, ուշադրութեան առարկայ եղած են անոնց համար, դէշ կարդացուելով՝ սխալ թարգմանուելով։ Հինը ի՞նչ պիտի ընենք, կըսեն, քանի որ աղբոր վէպեր կան հիմա. բնաւ կարեւորութիւն չեն տար հին գրուածներուն, անոնցմէ համ չեն առներ, թեթեւսոլիկ ճաշակ մը մտած է իրենց մէջ. լուրջ գրուածի մը ընթերցանութեան բնաւ չեն դիմանար, և սակայն մատենագրութեան այս պակասը ի՞նչ դէշ արդիւնք առաջ կը բերէ բարոյականի տեսակէտով։ Բնաւ չենք հակառակիր նոր կամ վիպական ընթերցումներու. ժամանակին արդէն չատագով եղած ենք այս մասին, բայց չենք կըրնար օրինաւոր զայրոյթ չզգալ խորհելով թէ մեր մատաղ միտքերը անգութ կերպով կը բաժնուին հին հեղինակներու ընթերցումէն։ Թո՛ղ դիտնան թէ իրենց տիպար ընտրած ֆրանսացիները ամենէն ազատ համարուած դպրոցներուն մէջ անգամ կանոնաւոր դասընթացք մը կանցընեն դասական ոճով եւ դասական տեսութեամբ։ Ժ.Զ. և Ժէ. դարերուն բոլոր հեղինակները ծանօթ են իրենց, անոնց վրայ կատարած են քերականական և տրամաբանական վերլուծումները. սենդարար գաղափարներ կան անոնց մէջ, զանոնք կիւրացնեն՝ իրենց մատաղ հասակէն. իմաստուն դատումներ, առողջ վճիռներ կը գտնուին հոն, կը ջնան սերտել զանոնք։ Լեզուի մաքրութիւն, ոճի աղնուութիւն հին հեղինակներուն կտակն է միշտ. անփոյթ ըլլալ այս մասին՝ մատենագրական ասպարէզին դէմ ոճիր գործել է. անոնք որ հիմա հիներուն չեն հաւնիր, վստահաբար գիտենք թէ իրենց նոր ճաշակը հիներուն ընթերցումով դատած են, և ճշմարիտ վիպականները խնամով յանձնարարած են կարդալ հիները. հիներուն վրայ եղած առաջդիմութիւնը ինչանակէր թէ անոնք արհամարհելի են, մանաւանդ թէ անոնց կատարած գործը կը ցուցնէ, եւ նոր ճամբաներ հարթելու համար յաջողութեան տարրերը դարձեալ իրենք. հիները՝ կրնան մեղի տալ։

Անգլիա, Գերմանիա, Միացեալ Նահանգներ գերազանցապէս դասական երկիրներ են և ամեն մարդ գիտէ թէ Եւրոպայի քաղաքակրթութեան առաջնորդ ազգերն են անոնք։ Ջնաչխարհիկ ջերմեռանդութեամբ մը կը պահպանեն իրենց հին աւանդները, դասական մատեաններու վերծանութիւնը աշակերտական կեանքին անհրաժեշտ պայմանն է։ Նոր դրականութիւնը անոնց մէջ բնաւ ոտտում չունի։ Հիւսիսի դրականութիւնը փայլուն է միշտ հակառակ իր մշուշներուն, Վէտայի պարզունակութիւնը յաւիտենական ճարակն է խորհող միտքերու և հայեցողական կեանքի։ Նորվէկեան դրականութիւնը մասնաւորապէս դասական անունով միշտ կեանքի։ Նորվէկեան դրականութիւնը մասնաւորապէս դասական անունով միշտ երիտասարդ հնութիւն մը ունի, և շատ նոր կամ վիպական անունով ծանօթ երկերը բոլորովին հինցած նորութիւն մը միայն ունին անոնց բաղդատմամբ։ Ֆրանսայի մէջ է որ առաջին տեսութեամբ մեղի այնպէս կերևի թէ հին տիպարները, դրական հեղինակները կարհամարհուին. բայց այդ երկիրը ուսումնասիրողները միշտ սխալած են իրենց հետեւութիւններուն մէջ։ Արտաքին անոտի փայլը շլացուցած է դիտողներուն աչքը և Վիպական քանդիչ դպրոցին նորութիւնները միայն նշմարելով, անտես կընեն բուն ֆրանսական ազգին ողջմտութիւնը՝ որ հին հեղինակներուն կամ դասական մատեաններու ընթերցումով կը սնանի։

Մերինները դատապարտելի անհոգութեամբ երեսի վրայ ձգած են հին հեղինակները. դասական մատենագրութիւնը գրեթէ դասական լեզուին հետ մեռած է մեր վարժարաններուն մէջ։ Մենք կը փափաքինք որ աշխարհիկ լեզուն՝ որով մեր ներկայ մատենագրութիւնը կը կազմուի, հետզհետէ միօրինակ, կայուն ձեւեր հագնի և անփոփոխ յարատեւութեամբ մը երևի ամեն գրիչներու տակ, բայց չենք բնաւ փափաքիր որ մեր դասական մատենագրութիւնը մեռնի իր գեղեցիկ ոճով և ներշնչող խանդովը։ Սրդէն անցեալները տխուր գուշակի մը դերը ստանձնած էինք, յայտարարելով որ եթէ հայերէն լեզուի ուսման ներկայ վիճակը շարունակէ մեր դպրոցներուն մէջ, հայ լեզուին և մատենագրութեան ուսուցիչ գտնել անկարելի պիտի ըլլայ շատ մօտիկ ապագայի մը մէջ։ Այս չարիքին պատասխանատուները մեկէ աւելի են։ Երկրորդական խնդիրներ. շատ կղբաղեցնեն մեր կրթական գործին վաստակաւորները կամ դիտողները. դպրոցը կը մոռնան, լեզուի խնդիրը, հին կամ նոր հայերէնի խնդիրը. հինը անանկ ողորմելի վիճակի մը մէջ ձգուած մեր վարժարաններու ծրագրին մէջ, իսկ նորը իւրաքանչիւր ուսու իչին քրմահաճոյքին դերի եղած։ Վէպեր քիչ մը քիչ կարդանք. օտար գրականութեան դիմելէ առաջ, մերը պրպտենք, դասականը չարհամարհենք այս կամ այն անձերու կամ դրողներու թերագրութեան տակ։

Դիտնանք թէ մեր բարքերուն թերթեւսութիւնը, պակաս կողմը՝ որուն համար երեմիական ողբ՝ը կը կարդանք, կուղղուին ա՛յն օրէն, երբ ճշմարիտ դատարակութեան կամ կրթութեան հիմը դնե՛նք մեր վարժարաններուն մէջ։

ՍԱԼՈՆԻ ԿԵԱՆՔԸ ՄԵՐ ՄԷՋ

Մարդը իր ամէն ձեռնարկութեանց մէջ միշտ զարգանալու ստիճանին մէջ է. ի՞նչ փոփոխութիւն որ մտցուցած է իր կեանքին ու ընկերական շրջանակին մէջ, ինչ որ չինած է, մասամբ տարրեր ու նորօրինակ է հինէն. այս փոփոխութեան մէջ է նաև Սալոնի կեանքը։

Յերեկուան ազնուականներն ձանձրացած միտքը, գիշերը իր սենեկին մէջ, ընտանիքին շուրջը կ'աշխատի հանգիստ մը գտնել, և այս հանգիստը կուզէ կատարել այնպէս մը, որ թէ իրեն և թէ բոլորտիքը գտնուողներուն օգտակար ու արդիւնարար ըլլայ. և գիշերային այս ժողովը սկսաւ անուանուիլ այժմ Սալոնի կեանք։

Բայց Սալոնի կեանքն ալ իր զարգացումն առաւ քաղաքակիրթ աշխարհին մէջ։ Եւ որովհետեւ մենք հայերս, միշտ քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան հետեւող կուզենք ըլլալ, առանց անոնց բուն նշանակութիւնը ըմբռնելու, զարգացուցած ենք, կամ հետզհետէ կը զարգացնենք մեր Սալոնի կեանքը, հետեւելով մեզ դրացի եւրոպական ազգերուն. այլ ողբալին այն է որ չենք հասցած այժմեան Սալոնի կեանքին բուն նշանակութիւնը, կուզենք որ միշտ քաղաքակրթութեան մասնանք, բայց այնպիսի միջոցներու կը դիմենք որոնք փոխանակ օգտակար ըլլալու մեզ՝ վնասակար հետեւութիւններ կունենան։ Սալոնի կեանք. հրապուրիչ և զուարճալի տեսարան, բայց հարցուցէք սա բարեկեցիկ ընտանիքներէն տիկնոջ մը (բացառութիւնները մէկդի) թէ ի՞նչ կը հասկնայ Սալոնի կեանքէն, ապահով եղէք թէ ձեզ պիտի թուէ պարերու տեսակնե՛ր, դաշնակ ու այլ նորամուտ սովորութիւններ։ Հարցուցէք սա եւրոպական ճաշակով մեծցած պարոնին, անմիջապէս ձեզ պիտի պատմէ իր սիրարանութիւնները, պիտի բացատրէ ձեզ խաղերու մէջ ըլլալ յաջողութիւնները։ Հապա սա օրիորդները, անոնց վրայէն [illegible] վերցած է հանեստութեան բոլոր ապականած բարք, ապականած սիրտ, և ասոր պատճառը գլխաւորապէս մեր մէջ մուտ գտած այժմեան Սալոնի կեանքն է։ Գիշեր մը ներկայ գտնուած եմ խիստ բարեկեցիկ ընտանեաց Սալոնի մը մէջ, և անդէն սրտիս ազդած է մեր ներկայ տխուր վիճակը։ Երկու տիկիններ թուղթ խաղալու զբաղած են. շիք երիտասարդ մը և օրիորդ մը իրարու խօսքեր կը փոխանակեն, իսկ անդին մի քանի հոգիներու մէջ պէզիկի թուղթն է որ մեծ դեր կը կատարէ, և անոնց ամենուն վրայ բարդեցէք այն կցկտուր խօսքերը, որ երբեմն երբեմն խօսակցութեանց մէջ կը նետուին. այս աչքովս տեսածս է, թող լսածներս։

Տա՛ ինքներ կը գլորին, մարդիկն ալ հետ կարծես կը տանին. մեզ համար յառաջդիմութիւն կը սեպենք, եւրոպական ճաշակը մեր աչքերը կը շլացնեն, բայց ցաւալին այն է որ լաւն ու գէշը իրարմէ զանազանելու կարողութեան տակաւին չենք հասած, և Սալոնի կեանքը տարբեր կերպարանքով, տարբեր գոյներով սկսած ենք կատարել մեր ընտանեաց մէջ։ Ես կը յիշեմ մեր գիշերային ժողովները. անորոշ ու հեռատեսութեան խօսակցութիւններ, հին ու պատմական դէպքեր, աւանդութիւններ, փոքրիկ վէպեր կոգեւորէին մեզ. տարեցը կը պատմէր իր կենաց փորձութիւնները, իր ժամանակակից դէպքերը, զուարճախօսութիւններ, սիրուն ասացուածներ իրարու կը յաջորդէին, և ասոնց ամենուն մէջէն ունկնդիրը կը հանէր իրեն համար բարոյական հետեւութիւններ. և այս տեսակ Սալոնի կեանքին մէջ կօգտուէր թէ մեծը ու թէ փոքրը։

Իսկ այժմ քանի կերթանք, քանի կը յառաջանանք, կուզենք չտեղ ու բարձրացնել մեր ընտանեկան շրջանակները, և սով ինքզինքնիս կուզենք դնել զարգացեալ ազգի մը տեղ, բայց եկու տես որ այս զարգացումին մէջ անկում մը կը նշմարուի, բարոյականի մեծ անկում։ Եւրոպական քաղաք մը այցելող պարոնը չխորժիր իր նոխկին ընտանեկան ժողովներէն. օտար լեզու մը գիտցող հայ օրիորդը արհամարհոտ աչքերով կը նայի իր հին սովորութեանց։ Ինչո՞ւ. — որովհետեւ մեծցած է այնպիսի օտար միջավայրի մը մէջ, որուն գոյնզգոյն տեսարանները շլացուցած են իր աչքերը. և փոխանակ իր տեսած արդի կերպ կերպ փոփոխութիւններէն բարոյական մը շինելու, կընդդիմի զանոնք, մէկդի թողով ինչ որ հին է, ինչ որ նուիրական է և ինչ որ իր ընտանիքին կը պատկանի։ Այժմեան երիտասարդութիւնը, մանաւանդ անոնք, որ յոռի կրթութեամբ մեծցած են օտար յարկերու տակ, լայն շունչ մը կառնէ դուեհիկ ու նախապաշարեալ սեպուած ընտանեկան շրջանակէն դուրս ելնելը զգալով։ Այս մեր այժմեան նոր սերունդին նախաքայլն է իր առաջին փոփոխութեանը մէջ, և մենք չզարմանանք երբ օր մը տեսնենք մեր ընտանեկան հին ու պարզ և բարոյական շրջանակները բոլորովին փոխուած գտանենք իրենց հին սովորութիւններէն, և այն առեն մեղքը որո՞ւն վիզը պիտի ըլլայ. դեռ ուշանա՞նք քննելէ։

Յ.Կ.

ԱՂԱՒՆԻ

Ա.

Խե՜ղճ աղուոր Աղաւնին. հազիւ 22—23 տարեկան, ամբողջ սեւեր հագած այդ մելամաղձոտ ու գեղանի կինը ճաշակած էր դառնութիւնը կեանքի բաժակին. ա՛լ չէր խնդար, երկար տեսներէ ի վեր մոռցեր էին թատրի շրջերուն վրայ ժպիտը, այտերուն վրայ՝ վարդը, աչերուն վրայ՝ փայլը, ու իր ծաղիկ հասակին մէջ կը [illegible] կեանք մը, կեանք մը [illegible]։

Հանուն [illegible] զուարճութիւններէ, մայն կը տեսնէինք զինք երբ եկեղեցի [illegible] վիրակի, կարեւորութիւն չտալ կեղծելով այն իրարանցումին, ա՛յն փոփոխութիւնին, որոնք իր շուրջը կը բարձրանային երբ ոտները ներս կը դնէր սեմէն, նա կը յառաջանար անշչուկ, կառանձնանար եկեղեցիին է՛ն մութ, է՛ն ծածուկ մէկ անկիւնը, ու հոն կանգնած երկար ատեն կաղօթէր։

—Այրի՞ է, կը հարցնէին իրարու անոնք՝ որ զինք չէին ճանչնար. այդչափ մատղաշ այրի՛...։

Բայց զինք ճանչցողները գիտէին որ այրի չէր նա, այլ աւելի սոսկալի բան մը. լքուած մը։

Ու ո՛վ որ սիրտ ունէր կը ցաւէր վրան։

Բ.

Ո՞ւր էին այդ լուսահոգի հին օրերը։ Աղաւնին այդ ժամանակները զէտք էր տեսնել, հազիւ 15—16 տարեկան. կարմիր՝ վարդի կոկոնի մը պէս որ նոր բացուելու վրայ է, սիրուն՝ աղաւնեակի մը պէս որուն փետուրները կը փայլին. ո՛հ, զայն նկարագրելը իմ գրչիս չէ ինկած։ Ես չպիտի փորձեմ աղուոտել առանց գեղեցկութիւն մը, որ Տէրոջը՝ գեղեցկին վրայ ունեցած դերագոյն ճաշակին մէկ փոքրիկ ապացոյցն էր կարծես։

Այդ տարիները բաց կասոյտ շրջագդեստ մը կը կրէր նա, ու կարմիր կերպասէ գոգնոց մը կերևիներ մինչեւ իր սոները։ Աւաւօտները շատ կանուխ կարթնանար, երկայն դեղձան մազերը բարակ ժապաւէնով մը կը ժողուէր գլխուն վրայ, գիրդ բաղուկները կը մերկացնէր մինչեւ արմուկները ու կը սկսէր գործի. սիրուն երգ մը բերանը. վազելով վեր, վար։

Մե՛նք, երբ կը տեսնէինք զինք, մե՛նք, պատանիներս այն ատեն, կը հառաչէինք, ու շատ երիտասարդներ ալ մեզի պէս կը հառաչէին։ Մեր մայրերը, անոր առջեւ, իրենց բերդին ջուրերը կը վազցնէին։

Որովհետեւ Աղաւնի՝ գաւառացի կնոջ մը մոտիվարն էր։

Գ.

Աւա՜ղ, շատ չքշեց այդ վիճակը, դժբախտութեան վայրկեան մը խորշակի մը պէս անցաւ անոր վրայէն. վարդը՝ թառամեցաւ իր գարունին մէջ, Աղաւնեակը՝ մերկացաւ իր աղուոր փետուրները, ու արցունքի կաթիլներ, խոշոր վերջակէտի մը պէս, վերջ տուին անոր երջանկութեանը։

Աղաւնի հօրեղբորորդի մը ունէր, սիրուն աղայ մը, հազիւ իրմէ տարու մը մեծ։

Զար չէր Սիսակ, բայց սիրուն էր ըսի, սիրուն տղաք թոյլ ձեռներու մէջ կը չփառնան ու Աղաւնիի հօրեղբայրը թոյլ հայր մը եղած էր միշտ։ Սակայն այս երկու տղաք զիրար կը սիրէին. կը սիրէին իբր մանկութեան ընկերներ, իբր միեւնոյն օրօրոցի պատուղներ. ի՞նչ հեշտ էր տեսնել զիրենք երբ, դեռ շատ պզտիկ, կը խաղային իրարու հետ. գիրար կը հալածէին կիթոտ քայլերով, կը վազէին կը վազվզէին երկու փոքրիկ թիթեռնիկներու պէս. ի՞նչ անոյշ օրեր այդ մանկութեան օրերը։

Բայց տարիները չէին սահեր առանց ներգործութիւն մը ընելու. կամաց կամաց մանկութեան խաղալիկները մէկ կողմ ձգած, լքած էին. երակներնուն մէջ ուրիշ արիւն մը սկսաւ փրփրիլ, եւ առնել. հիմակ կարծես աւելի կը փափաքէին իրարու հետ տեսնուիլ. Սիսակ ճիգ չէր խնայեր իր ընկերուհին զուարճացնելու, հոգի կուտար ստեղծելու անոր շրթներուն վրայ այն ժպիտը՝ որ երկու ակօսիկներ կը փորէր թաւշանման այտերուն վրայ. ու Աղաւնին ալ, այդ լուրջ աղջիկը, կարծես հաճոյք մը կզգար իր ընկերին անհամ շաղակրատութիւնները մտիկ ընելով։

Սէ՞րն էր արդեօք ասիկա. ո՛չ, այլ անոր քասն, այլ անոր կիրքն որ կսկսէր ստեղծուիլ այս պատանիներուն կուրծքին տակ։

Դ.

Օր մը չեմ գիտեր ի՞նչ եղաւ, երկուքն ալ տան վերնագաւիթն էին, յանկարծ Սիսակ դողդոջուն վար իջաւ, սաստիկ յուզ-

ուած, աչքերը վեր բարձրացնելու անկարող, դէմքը բոսորացած խոշոր ճակնդեղի մը պէս, գողի մը նման թեթեւ ու չուտաքայլ մի՛ շեւ փողոցին դուռը գնաց, բացաւ զայն ու գաղտագողի դուրս սպրդեցաւ։

Այդ օրը, այս երկու տղաներուն մտերմութեանը վերջին օրը եղաւ։ Օր մը ալ լսուեցաւ որ Սիսակ քաղքէն հեռացեր է, փախեր է։

Խե՜ղճ Աղաւնին, ալ ատկից ետք չէր այն ժպտուն աղջիկը. այն համարձակ օրիորդը խոյս կուտար հիմակ բազմութենէ, առանձնութիւնը կը փնտռէր, կը մեկուսանար խորը այն պարտէզին՝ ուր այնքան քաղցր օրեր էր անցուցեր մանկութեանը։ Հոն առատ առատ կուլար։

Ոչ ոք բան մը կռահեր էր սակայն, զօրաւոր կամքով մը սրտին թափփոթը աշխատութեան մէջ խղդեց, ամենուն առջեւ յաջողեցաւ սքօղել այն ցաւն որ կը կրծէր իր սիրտը. փորձեց ժպտիլ իսկ, թէեւ չը յաջողեցաւ, բայց կրցաւ տարբեր ազդեցութիւն մը գործել։

—Մեծնալով աւելի լուրջ կը լայ կոր, կըսէին իրեն համար, Աստուած հօրն ու մօրը բաշխէ...։

Ե.

Հինգ տարիներ անցած են։

Հիմակ սա մութ ու զզուելի գինետունէն ներս նայեցէք, կը տեսնէ՞ք այդ թխադէմ կորիւն որ կատաղօրէն կոկորդը կը պարպէ իր առջեւի գաւաթներու օղին, կը տեսնէ՞ք. նորէն կը լեցնէ, նորէն կը ճնկէ, այսպէս մինչեւ կէս գիշեր։

Աւիկայ Աղաւնին ամուսինն է տասն և հինգ օրերէ ի վեր։

Տխուր է, աչերը ուռած՝ լացով ու կատաղութեամբ, մթագնած՝ ալքօհոլով ու տխրութեամբ, մեծ ճիգ մը կընէ իր վրայ, որպէս զի արցունքի հեղեղը հոլովէ, գլուխը կախ, արմուկը կրծնցուցած այդ աղտոտ սեղանին, կը մտածէ։

Քովը ուրիշ ընկեր մըն ալ ունի, մտերիմ մը — ինչպէս կըսեն — մարդ մը կլոր դէմքով, ցից կարմիր մազերով, ճպլտուն կանաչ աչերով, դէմքէն յայտնի է որ խառնակիչ մըն է, քսու մը՝ որ հաճոյք կզգայ ուրիշը թշուառ տեսնելով։

Այս մտերիմը երբեմն երբեմն ընկերոջը ականջին բաներ մը կը փսփսայ. կարապետ խուլ հառաչ մը կարձակէ, աչերը քանի մը անգամ ուժով ուժով կը քթթէ, ձեռքը կերկնցնէ սեղանին ու օղիի գաւաթ մըն ալ կը պարպէ չորցած կոկորդէն վար։

—Կարգուելէն ի վեր գիտես քի տղան փոխուեցաւ, կըսէ մէկը իր քովի ընկերին։

—Գիտե՞ս գլխուն եկածը։

—Ո՛չ, ի՞նչ կայ որ...։

Ու «գիտե՞ս» ըսողը աջ ձեռքովը տեսակ մը խողովակ կազմելով բերանէն դէպ ի ընկերոջը ականջը, բաներ մը կը մուլտայ հոն։

—Վա՛յ...

—Սուս, ամա կաղաչեմ ուրիշին մ'ըսեր հա. ես ալ սանկ մէկէ մը լսեցի։

—Չէ՛ ճանըմ, հիչ ասանկ խօսք ուրիշին կըսուի՞... խեղճ կարապետ... վա՛յ սուտ հրեշտակ վա՛յ...։

Զ.

Հա՞րկ է նկարագրել ասկից ետք Աղաւնիի, քանի մը Աստուածաբաններու ըսածին պէս, թէ ա՛լ աշխարհ իրեն համար արցունքէ հովիտ մըն էր դարձեր, ամօթապարտ ու բամբասուած քաշքշելով չարչարանքի կեանք մը։

Որովհետեւ հակառակ գինետան մարդուն ո-րիչին մը՝ սիրեր խրատին, 2—3 օր ետք քաղքին մէջ զայն չգիտցող չկար, մանաւանդ կիներն «Օրուան խնդիր» ըրած էին զայն։ Երիտասարդուհիներ երդեր յօրինեցին այս դէպքին վրայ, ու եղան անխիղճ երիտասարդներ որոնք երգեցին զանոնք... Աղաւնիի տան դրան առջեւէն անցած պահերնուն։

Կարապետի կիրքերը կը զրգռուէին ամեն օր, այսօրինակ նորանոր միջադէպերով, վիշտն անմոռանալի կըլլար իրեն, ու օր մըն ալ գինովութեան մէկ սոսկալի վայրկեանին մէջ, բաւ չհամարելով այդ մէկ տարուան չարչարանքն որ տուած էր իր տարաբաղդ կնոջ, կից մը տուաւ ու փողոց ձգեց զայն։

Աղաւնի լալով ու ամօթահար, մօրը տունը գնաց, մօրը տունը կըսենք, որովհետեւ հայրը այս սոսկալի ժամանակին մէջ կաթուածահար մեռած էր։

Է.

Տարիներ անցած են այս դէպքին վրայէն։

Սակայն ամեն անգամ որ առիթ կունենամ գերեզմանատուն այցելել, քայլերս կուղղուին դէպի դամբարան մը, հոն թմբիի մը տակ սպիտակ մարմարէ փոքրիկ տապան մը կայ, որ ինչպէս վրան գրուած է, է «Մահարձան Տիկին Աղաւնի ***ի, որ հանգեաւ ի Տէր ի քսանեւհնգամեայ ծաղիկ հասակի» և որուն ողորմելի քառեակին վերջին տողը կը խնդրէ, «Ցիշեցէք զինք հայր Դերով մի»։

Խե՜ղճ, անբաղդ Աղաւնի, Դո՛ւն որ երջանիկ ըլլալու ու երջանկութիւն պարգեւելու համար աշխարհ եկած էիր, Դո՛ւն տկար բնութեան մը, ընկերական սխալ կարգ ու սարքի մը նախապաշարումներու զոհը եղար։

Քու յիշատակդ օրհնեալ ըլլայ ո՛վ մորեալ հրեշտակ։

Ց. Ս.

Սպարթադուլէ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՍՊԱՆԻԱ ԵՒ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ.—Վաշինկթընի սպանիական դեսպանը հեռագրած է թէ Քուպայի ապստամբութեան սկզբնաւորութենէն ի վեր ամերիկեան կառավարութեան տրամադրութիւնները երբեք այսքան նպաստաւոր եղած չէին Սպանիոյ համար։ Քուպայէն Պլանքօ մարաշխատ հեռագրած է թէ ամիսը քառասուն միլիոնի պէտք ունի պատերազմական ծախքերու համար մինչեւ յունիս, երբ կը յուսայ խաղաղեցնել արեւմտեան չորս գաւառները և ապստամբութիւնը ամփոփել միայն արեւելեան երկու գաւառներուն մէջ։ Մարաշխատը կուզէ գաղթային զինուորները վերակազմել, որոնք սպանիացի զօրքերէն աւելի դիւրաւ կը դիմանան Քուպայի կլիմային։ Նոր զօրքեր չպիտի պահանջէ, իրեն քով գտնուած 114,000ը կը բաւէ իրեն,

—Սպանիոյ նախարարաց ժողովին մէջ նախարարապետ Մ. Սակասթա քաղաքական կացութիւնը սարզեց։ Քուպայի Բինար-տէլ-Բիօ գաւառին մէջ մղուած գինուորական գործողութիւնները կը ցուցնեն թէ, ըսաւ, ապստամբութեան կարեւոր վառարան մը կայ հոն, թէեւ Վէյլէր զօրավար յայտարարած էր թէ այդ գաւառը խաղաղած էր։ Պէրնալ զօրավար հրաման ընդունեցաւ ապստամբներուն ետեւէն կրնալու անդադար։ Գալով Փրլիպեան կղզեայ, նախ կարծուեցաւ թէ այդ կողմերը բոլորովին խաղաղած են. հիմա հակառակ կարծողները կը շփոթանցնեն։ Սակայն այդ կղզեայ հրամանատարը կը հաստատէ թէ ապստամբներուն հետ բանակցութիւնները կը շարունակուին, հնազանդութիւն յայտնել տալու համար անոնց։ Տոն Բարլոսեան չիմթութեանց առթիւ Մ. Սակասթա ըսաւ թէ այդ խնդիրն ալ կառավարութեան ուշադրութեան արժանի էր, բայց չկարծեր որ Բարլոսեանք արիածախնդիր քաղաքականութեան մը հետեւին։— Վաշինկթընէն սպանիական դեսպանը կը հեռագրէ թէ սխալ է որ Միացեալ Նահանգներէն նոր նաւ մը մեկնած ըլլայ դէպի Քուպա զինուոր փոխադրելու համար։— Հավանայէն հեռագիր մը կըսէ թէ Բինար-տէլ-Բիօ գաւառին մէջ մղուած վերջին պատերազմին մէջ երբ Սպանիացիները «Կեցցէ Սպանիա» կը գոչէին, ապստամբները կը պատասխանէին. «Մեռցի ինքնօրինութիւն»։ Ապըստամբները 19, իսկ սպանիացիք 5 մեռեալ ունեցան, որոնց մին սպայ։ Սխալ է թէ Բանդօ զօրավար սպաննուած ըլլայ։

ԱԻՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.— Ֆրանսուա-ժողէֆ կայսր իր քով կանչեց նախարարապետ Պառոն Կաւչը, պատերազմական գործոց նախարար Պառոն Բրիկհամմերը, ազգային պաշտպանութեան նախարար կոմս Վէլսէրշայմսը, երբ լսեց Բրակայի անկարգութիւնները, որ Պոհեմիոյ զանազան գաւառներուն մէջ ալ կրկնուած էին Զեխերուն և գերմաններուն միջև։ Կայսրը հրամայեց որ զինուորապէս պաշարման վիճակի մէջ դրուի Բրական և անոր արուարձանները և անմիջապէս նոր զօրք ղրկել Պոհեմիոյ մայրաքաղաքը (Բրակա)։ Յետոյ Պառոն Կաւչ յաջորդաբար խորհրդակցեցաւ խորհրդարանին աջակողմեան և ձախակողմեան պետերուն հետ, բայց առանց ոչ է արդիւնքի, վասնզի թէ աջ և թէ ձախ պատահեցաւ Գերմաններուն և Սլաւներուն անհաշտ յաւակնութեանց՝ լեզուի խնդրոյն ինչպէս նաեւ խորհրդարանին նախագահութեան համար։ Պաշտօնաթերթը հրատարակեց նոր նախարարութեան ծրագիրը, որ կը խոստանայ նախ և առաջ բարեկարգութիւն վերահաստատել, յետոյ հրաւիրել բոլոր կուսակցութիւնները որ կառավարութեան նուիրեն իրենց աջակցութիւնը իրաւանց սկզբունքին և հաւասարութեան օրէնքին համաձայն կառավարելու նպատակաւ։

—Նախորդ նախարարապետ Պատէնի կոմս ունկնդրութիւն տուաւ Պոհեմիոյ և Երիտասարդ— Զեխերուն աւանդական մեծ ընկերութեան պետերուն՝ Բայֆի կոմսին և Տր. Էնկէլի, որոնք շնորհակալ եղան իրեն, Զեխ ազգութեան դատին համար իր տարած ջանքերուն մասին։ Պատէնի կոմսը այս դիմումին յոյժ զգածուած յարեց թէ իր քաղաքական անյաջողութեան մէջ մեծ մխիթարութիւն մ'էր իրեն համար խորհիլ թէ չէիս ազգութեան դատին նոր մղում մը տուած էր։

—Պոհեմիոյ կառավարիչը՝ կոմս Ֆոն Քուտէնհովէ՝ Բրակայի և արուարձաններուն փողոցներուն մէջ յայտարարութիւն մը փակցուցեալ տուաւ բնակիչներուն ուղղուած, ծանուցանող թէ պատերազմական օրէնքը գործադրութեան մէջ էր, և հետեւաբար անդորրութեան կը հրաւիրէր զիրենք յանուն կայսեր։ Այս յայտարարութենէն վերջ այլ եւս չկրկնուեցան անկարգ տեսարաններ, բայց ի քանի մը արուարձաններէ։ Բրակայի քաղաքապետն ալ նոյնիմաստ յայտարարութիւն մը ըրաւ, պատուիրելով մանաւանդ Զեխերուն հանդարտ մնալ։

—Հունգարիոյ անկախութեան կուսակցութեան պետը՝ Մ. Ֆրանսուա Քոշութ Հունգարական Խորհրդարանին մէջ նախարարապետ Մ. Պանֆիլը հետեւեալ հարցապնդումն ըրաւ. «Աւստրիոյ արդի կացութեան առջեւ Հունգարիոյ Խորհրդարանը ե՞րբ պիտի խորհի Խորհրդարանին ներկայացնել առաջարկութիւններ ա՛յն իրաւանց համար, զոր Հունգարիա ունի առանձինն հաստատելու, թէ ինչ պայմաններով պիտի կանոնաւորուին երկու երկիրներուն հասարակաց տնտեսական գործերը։» Բաց ատենաբանը զայրոյթ յայտնեց Աւստրիոյ խորհրդարանական պատգամաւորներուն մասին։ Նախընթաց օրուան նստին մէջ կը կարծուէր թէ Պառոն Պանֆիլ պիտի պատասխանէր այս հարցապնդման։

—Թոն Աւսարիոյ ներքին կացութեան և նախարարական փոփոխութեան վրայ խօսելով կաւելցնէ թէ կացութեան տէրերը Գերմաններն են։ Ով գիտէ ի՞նչ կը խորհի կացութեան մեծ մարդը, Շէօնէրէր առաջնորդ և իր քաջարի ընկերը Մ. Վոլֆ, որ իր երկրորդ յաղթութիւնը տարաւ Պատէնի կոմսին վրայ, զոր վիրաւորեց մենամարտի մը մէջ, այլ մայացու հարուածը տուաւ խորհրդարանական կռիւմարտութեան մէջ։ Զարմանալի է որ Մ. Լուէկէր և հակասեմականք իրենց թշնամի եղբայրներուն՝ Գերմաններուն զիջողութիւն ընելով՝ մեռցուցին Պատէնի կոմսը և մտան գերման կուսակցութեան ծոցը, անոր ամենէն գեղեցիկ զարդն ըլլալով։ Իրենց ատելութիւնը տարին մահառականութեան դէմ, և իրենց վէճերն աւստրո-հունգարական իրաւախոհութեան դէմ։

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԹՐԱՆՍՎԱԱԼ.—Գերմանիա և Ֆրանսա մասնաւոր դիմումներ ըրին Թրանսվաալի Հանրապետութեան նախագահին, որպէս զի իրենց հպատակներուն ինչ ինչ դիւրութիւններ տրուին։ Բայց Մ. Քրիւկէր այդ առաջարկութիւնները մերժեց և մինչեւ անգամ Ազգ. ժողովին նիստերը յետաձգեց։ Եոհաննէսպէրկէն հեռագիր մը կաւելցնէ թէ Մ. Քրիւկէրի այլամերժ քաղաքականութիւնը այս կերպով պիտի պատճառէ իրմէ շատ համակրութիւններ, որոնց օժանդակութիւնը կրնար զինքը ի հարկին շատ դժուարութիւններէ ազատել։

ՄԻՍՑԵԼԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. — Մ. Մաք Քինլի ԲԵ. բացաւ համաժողովին նստաշրջանը։ Լաւատեղեակ աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններու համեմատ, նախագահական պատգամագիրը պիտի յիշատակէ Սպանիոյ կողմէ Քուպայի տրուած ինքնօրինութիւնը, և կացութեան ուրիշ մանրամասնութիւնները պարզելէ վերջ պիտի հաստատէ թէ արդի պարագաներուն մէջ Միացեալ Նահանգները միջամտելու իրաւունք չունին։ Պատգամագիրը մեծ մասամբ պիտի խօսի դրամական շրջաբերութեան և արտաքին քաղաքականութեան խնդիրներուն վրայ։ Պատգամագիրը պիտի ըսէ նաև թէ Հավայի կղզեայ կցումը պարտաւորիչ է և երեւան պիտի բերէ այդ կցումէն առաջ գալիք մեծ շահերը։ Յետոյ պատգամագիրը ընդարձակօրէն պիտի խօսի եւրոպական զանազան երկիրներու հետ կընքուած փոխադարձ դաշնադրութեանց կամ բանակցութեանց վրայ, յոյս պիտի յայտնէ թէ բանակցութիւնք գոհացուցիչ արդիւնքներ պիտի ունենան։ Պիտի յայտարարէ թէ, եթէ Ամերիկա մասնաւոր զիջումներ կընէ օտար ապրանքներու՝ ինչպէս Ֆրանսական շամբանեաներուն համար, պէտք է որ փոխադարձ զիջումներ ալ Ամերիկա ինք վայելէ օտար երկիրներէն,

ՖՐԱՆՍԱ.—Հարաւային ջրանցքը և Կարոն գետին կողմնական ջրանցքը Պետութիւնը դնեց մասնաւոր ընկերութիւններէն։—Վիէննայի ֆրանսական նորընտիր դեսպան և Ալճերիոյ նախորդ կուսակալ Մ. Ֆանպոն դեկտ. 12ին Վիէննա իր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ.—Շանկայի Թայմսի Թղթակիցը չինօ-գերման վէճին առթիւ հետեւեալ տեղեկութիւնը կուտայ. «Չինաստան կը ջանայ որ Գերմանիոյ պահանջումները իրաւարարութեան մը ենթարկուին։ Այդ պահանջումները ա՛յն աստիճան մեծ են որ Շան-Թունկի քարոզիչներուն սպանութեան համար պարզապէս իրրեւ հատուցում չեն կրնար մեկնուիլ։ Պերլինի դահլիճը արտասովոր առանձնաշնորհումներ կը պահանջէ այդ դաւառին ածխային հանքերուն շահագործութեան համար։ Բէքինէն կը ծանուցուի որ չինական կառավարութիւնը չկրնար յորդորել Ռուսիան որպէս զի միջամտէ, քանի որ այդ պետութիւնը կը փափաքի գործելու կատարեալ ազատութիւն ունենալ Բորէայի մէջ։ Մեծ Բրիտանիոյ բոլոր շահերը կը պահանջեն որ Բիաօ-Զէու վաճառականութեան առջեւ բաց մնայ։ Ածուխի հանքերուն զարգացումը հիւսիսային Չինաստանի վաճառականութեան մղում պիտի տայ, պէտք չէ որ այդ հանքերուն մենավաճառը յանձնուի Գերմանիոյ կամ միակ պետութեան մը։ Եթէ այս մենավաճառը Գերմանիոյ տրուի, Մեծ Բրիտանիա Եանկ-Զէի գաւառներուն մէջ պարտաւոր է հատուցումներ պահանջել։» Ուրիշ անգլիական թերթեր կը կարծեն գիտնալ թէ լորտ Սալզպրի բացատրութիւն խնդրած է Գերմանիոյ դրսման համար, բայց Ֆրանսա և Ռուսիա այդ գաղափարին դէմ բողոքած են։

ԾԵՌԱԳԻՐ

ԲԷՇԹԱ 6 դեկ.—Նախարարապետ Պառոն Պանֆիլ օրինագիծ մը ներկայացուց մաքսային գործերուն ինչպէս նաեւ պետական դրամատան վերաբերեալ գործերուն առժամանակեայ կանոնագրութեան վերաբերեալ։ Օրինագիծը կըսէ թէ կառավարութիւնը այս մասին վերջնական ծրագրերը ժողովին պիտի ներկայացնէ մինչեւ 1898 փետր 1։

—1898 տարուան եւմատացոյցի առաւելութիւնն է 75,721 ֆիորին։

ԲՐԱԿԱ.—Դպրոցները բացուեցան։ Քաղաքը իր կանոնաւոր տեսարանը վերստացաւ։ Մինչեւ հիմա մեծ դատաստան մը կամ դատապարտութիւն մը եղած չէ։

ՀԱՒԻԴԻ.—Երկու գերման յածաւորակներ այսօր նաւահանգիստ եկան ուժ տալու համար գերման ներկայացուցչին պահանջումներուն գերմանահպատակ Լուտէրսի գործին պատճառաւ։ Ուրիշ օր պայմանաժամ տրուած է։

ՆԻՒ ԵՈՐՔ.—Մաք Քինլի նախագահին պատգամագիրը ցոյց կուտայ խաղաղութեան պահպանումը և բոլոր ազգաց հետ եղած բարեկամական յարաբերութիւնները։ Կաւելցնէ թէ Միացեալ Նահանգները չեն ուզեր օգուտ քաղել Սպանիոյ անբաղդութենէն և թէ Քուպացիներուն համար ինքնօրինութիւն կը փափաքին միայն։

ԲԱՐԻԶ.—Տրէյֆիւսի գործին համար Մ. Շէօրէ Քէսթնէրի հարցապնդումը տակաւին որոշուած չէ։

—Ֆրանսական մամուլը ընդհանրապէս կը գովէ կառավարութեան ընթացքը Տրէյֆիւս—Էսթէրհազի գործին մէջ։ Սոլէյլ կը պահանջէ որ պատերազմական ատեանին վիճաբանութիւնները հրապարակաւ ըլլան։

ՊՈՒԿԲԻՇ.—Ռումանական ժողովուրդը կը բողոքէ տեղական գործոց մէջ Հրէից մասնակցութեան դէմ։ Ջերբակալումներ եղան։

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

ԱԹԷՆՔԷՆ կը գրեն դեկտ. 5 թուականով. Մ. Զայմիսի յայտարարութեանց նայելով, խորհրդարանին օրակարգի առաջին խնդիրը պիտի ըլլայ գօնթռոլի յանձնաժողովին իրաւասութեան խնդիրը և ապա հաշտութեան դաշնագիրը։ Հաւանական է որ կառավարութիւնը հին պահանջատէրներու հետ կարգադրութիւնն ալ առաջարկէ։ Այս վերջին ծրագրին քուէարկութենէն յետոյ խորհրդարանը նորէն պիտի դադրեցնէ իր աշխատութիւնները քառասուն օրի չափ, որպէս զի կառավարութիւնը ժամանակ ունենայ պատերազմական տուգանքի բանակցութիւնները կարենալ կատարելու համար։

—Պատերազմական նախարար, զօրավար Սմոլէնսքի ըսած է թէ բանակը կազմակերպելու պաշտօնը հինգէ աւելի սպաներու չպիտի յանձնուի։ Սպայակոյտ մը պիտի կազմուի պատերազմական նախարարութեան մէջ։

—Բ. Դուռը Պոլսոյ Մեծ Տէրութեանց դեսպաններուն ղրկեց հաշտութեան վերջնական դաշնագրին մէյմէկ օրինակը։

—ԱԹԷՆՔԷՆ կը հեռագրեն թէ սահմանագուխը ճշդող յանձնաժողովը հիմա Գալապաքա կը գտնուի։ Եթէ օդը շարունակէ այսպէս գեղեցիկ ըլլալ, շաբթուս վերջը, յանձնաժողովը կաւարտէ իր աշխատութիւնները։

—Վոլօի տեղական իշխանութիւնները էտհէմ փաշայի դիմած են հասկնալու համար թէ Ցունաստանէն թեսալացի գաղթականներուն ղրկուած ալիւրէն 8 % սովորական մաքսատուրքը պէ՞տք է առնել։ Հրամանատարը պատասխանած է թէ այդ ալիւրները պէտք է զերծ ըլլան ոչ է մաքսատուրքէ։

—Ահաւասիկ թարգմանութիւնը Հելլէն Ա. պատուիրակ իշխան Մավրօքօրտաթօի նախարարապետին ուղղած հեռագիրը, հաշտութեան կնքումը ծանուցանող.

Այսօր (շաբաթ) Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատան մէջ ժամը 3½ին ատենները օսմ. պատուիրակներուն հետ կատարուած բանակցութիւնները աւարտելով Հաշտութեան վերջնական դաշնագիրը կնքուեցաւ։

Առեւտրական և շոգենաւերու երթեւեկութեան խնդիրները երէկուան և այսօրուան նիստերուն մէջ ալ բանակցութեանց առարկայ եղան և ասոնց մասին զատ պայմանագրութիւն մը կնքել որոշուելով բանակցութիւններուն վերջ տրուեցաւ։

Հաշտութեան վերջնական դաշնագիրը ստորագրուելով հանդերձ այսուհետեւ կընքելի պայմանագիրներուն բանակցութեանց միջոցին ծագած դժուարութիւններուն առթիւ մեծ տէրութեանց միջամտութիւնը պահանջելու իրաւունքը պահուած է։

Նիգոլա Մավրօքօրտաթօ

Նախարարապետը այս հեռագիրը առնելուն պէս, թագաւորին, նախարարներուն և օտար պետութեանց քով գտնուող Հելլէն դեսպաններուն հաղորդեց հաշտութեան կնքման լուրը։ Հետեւեալ յայտագիրը ներկայացուց թագաւորին։

Վեհափառ Տէր.

Մեր Պոլսոյ պատուիրակներէն հիմա առնուած հեռագիրը Ձերդ վեհափառութեան ներկայացնելով, կը յայտնեմ թէ այսօր ժամը 3½ին հաշտութիւնը կնքուած է Բ. Դրան, արտաքին գործոց պաշտօնատան մէջ։ Ձեր հաւատարիմ ծառան

Աղեքսանդրը Զայմիս

Նախարարներուն ալ հետեւեալ կերպով հաղորդուած է այդ լուրը.

Ն. Արքայական Վեհափառութեան Պոլսոյ պատուիրակներէն հեռագիր մը առի, որով կը ծանուցանեն թէ այսօր, ժամը 3½ին հաշտութիւնը կնքուած է Բ. Դրան արտաքին գործոց պաշտօնատան մէջ։

Նախարարապետ

Աղեքսանդրը Զայմիս

—Հելլէն պատուիրակները, իշխան Մավրոքօրտաթօ և Մ. Մթէֆանու նախընթաց օր և երէկ օտար տէրութեանց դեսպաններուն այցելութիւն տուին։

Հաւանական է որ ուրբաթ օր ն ըկայ ըլլան Սէլամլըքի արարողութեան։

—Սուլթանի մէջ կը կարդանք. Թեսալիա գտնուող, սահմանագուխը ճշդող յանձնախումբը շաբաթ օր Ցունաստանի պատերազմական նախարարին հեռագրած է թէ իր աշխատութիւնները աւարտած և Թուրք և Հելլէն նոր սահմանագլխին քարտէսը գծուած է։

Ցանձնաժողովը, այսօր, չորեքշաբթի Վոլօի ճամբով Աթէնք կը դառնայ։

—ԱԹԷՆՔԷՆ կը հեռագրեն նոյմ. 23ին. երէկ իրիկուն հաշտութեան ստորագրութեան լուրը Աթէնքի մէջ տարածայնուելով, քանի մը երեւփոխան նախարարապետին երթալով տեղեկութիւն ուզեցին այս մասին։ Նախարարապետը իրեն եղած հարցումին պատասխանելով ըսաւ թէ Խորհրդարանը քանի մը օրէն պիտի բացուի, քանի որ հաշտութիւնը ստորագրուած և սահմանագլխի աշխատութիւնները աւարտած են։

ՏՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ Թիւ 10

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէն սկսեալ իր տան մէջ. և կը դարմանէ մասնաւոր խնամովներքին հիւանդութիւնները, տղայոց տկարութիւնները, մորթի, միզային ճանապարհաց և ծննդային գործարանաց ախտերը։

Զորեքշաբթի օրերը ազքատ հիւանդներ կ'ընդունի ձրիաբար։

Բչ. Եչ. Շբ. օրերը ժամ 9ին կ'այցելէ նաեւ Սուլթան Մահմուտի դամբարանին դէմ Հ. Էմիրզեան Էֆ.ի դեղարանը։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կրօնական ժողովը երէկ ի նիստ գումարուեցաւ Ազգ. Պատրիարքարանի մէջ, Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և Ատենապետութեամբ Գեր. Գրիգորիս Արքեպիսկ. Յովհաննէսեանի։ Ժողովն զբաղեցաւ անհատական և ամուսնական ինչ ինչ խնդիրներով։— Ա. Ժողովը ուշադրութեան առաւ Աժասիոյ Գաւառային վարչութեան խառն ժողովոյ մէկ պաշտօնագիրն, որով կը խնդրեր Մարզուանու Զարխափան վանուց վարդապետ ձեռնադրել բնիկ Ամասիացի և Գէորգեան ճեմարանի շրջանաւարտ Տ. Գրիգոր Իրքանոսեանը։ Ժողովն որոշեց որ յիշեալն սարկաւագ ձեռնադրուի և երկու ամսոյ չափ Արմաշու դպրեվանքը եկեղեցական կարգաւորութեանց վարժուելու համար մնալէ ետքը ձեռնադրուի կուսակրօն քահանայ։— Բ. Ժողովն որոշեց Դասթամունիի Պոյաճատ և Թաշ Քէօբրիւ գիւղաքաղաքաց այցելու քահանայ ձեռնադրել տեղւոյն Առաջնորդական փոխանորդին կողմէ այդ նպատակաւ մայրաքաղաքս ղրկուած Պ. Գէորգ Մարգարեան ընծայցուն։— Գ. Ժողովը իր անցեալ նստին մէջ առաջարկած էր Յարութիւն Աւագ Սարկաւագ Կամսարականի՝ կամ Լինկիւրիի և կամ Սըվազի վանուց մէջ ժամանակ մը մնալ, ընտրութիւնն իրեն թողուով, որպէս զի յառաջիկային վարդապետ ձեռնադրուի։ Այս անգամ Յարութիւն Սարկաւագ՝ Կեսարիոյ Ս. կարապետ վանքը երթալ նախընտրած ըլլալով, ժողովն հաճեցաւ առ այդ և որոշեց յանձնարարել Կեսարիոյ Գեր. Առաջնորդ Ս. Հօր հարկ եղած պաշտպանութիւնն չղլանալ իր հովանաւորութեան ներքև սիրաշահելու համար յիշեալ սարկաւագը։

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրը երէկ առաւօտ Պէշիկթաշ երթալով, Բարձր. Յարութիւն փաշայի այցելութիւն մը տալէ վերջ, Ազգ. Պատրիարքարան իջաւ և օրուան ընթացիկ գործերով զբաղեցաւ։

—Գատրգիւղի Արամեան երկսեռ վարժարանաց անկերպարան վիճակը չափազանց ժժգոհութիւն պատճառած է գիւղին Ազգայնոց, այնպէս որ ծնողք մեծ մասամբ իրենց զաւակներն օտար վարժարանները կը ղրկեն, ո՛չ հարցնող կայ, և ոչ փնտռող. տակաւին հոգաբարձութիւնն ալ կազմուած չէ։ Թաղական խորհուրդը մինչև ե՞րբ իր այս անտարբեր ընթացքը պիտի շարունակէ, կը հարցունեն մեզ. գիւղին մէջ 600է աւելի երկսեռ մանուկներ կը համրուին, որոնց հազիւ 160ը կը յաճախեն Արամեան. Պատճա՞ռ։

—Դոհուլթեամբ կիմանանք թէ Վեհ. Զաբը Ս. Սրանէլաս պատուանշանին մեծ կարգը շնորհած է Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Վսեմ. Նորատունկեան Գաբրիել էֆ.ի։ Այս առթիւ մեր անկեղծ համակրանքը և ջերմագին շնորհաւորութիւնները Նորատունկեան էֆէնտիին։

—Երէկ Կրօն. ժողովոյ նիստէն վերջ, Գեր. Տ. Գրիգորիս Արքեպսկ. Յովհաննէսեան առանձին տեսակցութիւն մը ունեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ։

—Ուսումն. Խորհուրդը շրջաբերական մը ղրկելով մայրաքաղաքիս թաղ. խորհրդոյ յայտնած է թէ, մէկ ամիս ևս պայմանաժամ տրուած է ուսուցչական վկայագիր չունեցող ուսուցիչներու, որպէս զի Ուսումն. Խորհրդոյ դիմելով հարկ եղած օրինական արտօնութիւնը ստանան. այդ պայմանաժամուն աւարտելէն վերջ առանց վկայագրի ուսուցիչները պաշտօնէ պիտի դադրեցուցուին և այս մասին ո և է դիմում անլսելի պիտի մնայ։

—Երէկ Ս. Պատրիարք Հօր հետ տեսակցութիւններ ունեցան Գումգապուի դրսի բարեխրատ քաջոզիչ Գեր. Եղնիկ եպսկ. Ապահունի և Մաքրաղրի արտօնատէր կարապետ էֆ. Լիթիւճեան։

—Ազգ. Պատրիարքարանին բարապաններէն կարապետ աղայի համար բողոքներ կը հասնին մեզի։ Երէկ մանաւանդ իր անկրթութեան վայրէն ապացոյցը տուաւ ազգային բաղմերախտ և ծերունի վաստակաւորներէն միոյն, որ անձնական գործ մը կարգադրելու համար Պատրիարքարան երթալ յանդգնած էր։ Այդ ստորադաս պաշտօնեան կարգ մը անմարսելի նախատինքներ ըրաւ անոր, պոռալով կանչելով Պատրիարքարանին մէջ։ Կը յուսացուէր որ երէկ իրիկուն ճամբայ տրուէր իրեն, վանդի լսածնուս նայելով Ամեն. Ս. Պատրիարք Հայրը բարկանալով այդ բարապանին ընթացքին վրայ՝ զայն ճամբելու որոշում տուած է։ Այդ գիւրին գործը վարելու համար չեն պակսիր աւելի կրթուած, աւելի տաշուած անձեր։

—Արժ. Տ. Յովհաննէս քահանայ, որ չորս տարիէ ի վեր կը պաշտօնավարէր Բերայ, այսօր կ'ուղեւորի Տէտէ ալաճ, տեղւոյն հայ ժողովուրդը հովուելու համար։

Յիշեալ քահանայ յատկապէս իր սրտագին շնորհակալութիւնը յայտնած է թէ Բերայի Աւագերէց Տ. Մրբեան և Հոր, թէ քահանայական դասուն, և թէ Թաղ. Խորհրդոյն, մինչև յարդառ ինքն եղած համակրութեան և յարգանաց համար։

ՆՈՐԻՆ ՀՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՅՍՕՐՈՒԱՆ

Թնդանօթարանի հաշուակալ Հիւնի պէյի Պալաի, հաշուակալութեան փուանին տեսուչ Լահէմ էֆ.ի Միրմիրեանի աստիճան տրուեցաւ։

Ծովային բարենորոգման յանձնաժողովին դեբ-նախագահ։ դնդապետ Հաճի մէհմէտ պէյի Միրլիվայի աստիճան տրուեցաւ։

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Սաքս Ալթէնպուրկի դուքսին եբայր, Էրնէսթ իշխանին Ա. կարգի Օսմանիյէ և յիշեալին հետեւորդ Մ. Բպէր Շիլէրի Գ. կարգի մէճիտիյէ տըրուեցաւ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ

Կրթական նախարարութեան Էդրադի Բ. քննիչ կարգուեցաւ Ա. արձանագրիչ Իհսան էֆ։

—Կրետէի խալամ կարօտեալներուն համար 3000ի չափ բուրդէ անկողնի պէտք կայ, բարձրով մէկտեղ. մեծ անկողիններուն լուրաքանչիւրին 25 և պզտիկներուն 19 ղրշ. գին կը վճարուի։ յանձնառուները պարտին դիմել Մէարիֆի պաշտօնատունը, Նոյեմբ. 27ին ժամը 7էն մինչև 9։

Նախընթաց օր Բ. Դրան մէջ զինուորական յանձնաժողով մը գումարուեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին նախագահութեամբ։

—Երէկ առաւ Մեծ Տէրութեանց դեսպանները և գործակատարները աւստրիական դեսպանատունը նիստ ըրին։

—Գերմանական դեսպան Մ. Մառշալ այսօր արեւելեան ճեպընթացով Պոլիս կը հասնի, ընտանիքով հանդերձ։

—Ռուսական դեսպան Մ. Զինովիէֆ, հաւանական չնկատուիր որ դեկտ. 20էն առաջ Պոլիս գայ։

—Վեհ. Սուլթանը երկուշաբթի իրիկուն Օսմանիյէի ականակուռ պատուանշանը շնորհեց Շուէտ-Նորվէկիոյ դեսպան կոմս Սքէնպօքի։

—Ռուսիոյ Զարը Ս. Սրանէլաս պատուանշանին մեծ կարգը շնորհած է Բ. Դրան իրաւագէտ-խորհրդական Նորատունկեան Գաբրիել էֆ.ի, արտաքին գործոց նախարարութեան ընդհ. քարտուղար Նուրի պէյի և օտար թղթակցութեանց դիւանին դերտնօրէն Բէճէպ պէյի։

— Սելանիկէն կը գրեն վիեննական թերթի մը թէ Տանիլօ արքեպսկոպոսին և Իկումեն երէցը որ Այնորոզի վանահօր կողմէ Սոֆիա ղրկուած է էին, հրաւիրելու համար Ֆերտինանտ իշխանը որ իրենց վանքը այցելէ. Սելանիկէն անցնելով վանք գարձած են։ Իշխանը խոստացած է որ իր գաւակին, Պորիս իշխանին հետ յառաջիկայ Զատիկը Այնորոզ կանցունէ։ Սակայն Տոզունած եպիսկոպոսը որ հակառակած էր այդ հրաւէրին, Հիլէնտար վանքէն մեկնելով Սարգի վանքը քաշուած է, իրեն հետ ունենալով Վասիլիէ արքիմանդրիտը։

—Տեղական մամուլին տեսուչ Պէհճէթ պէյ, որ արձակուրդով Սելանիկ գացած էր, իր աներոջ, Սելանիկի կուսակալ Ռիզա փաշի քով, երէկ մայրաքաղաքս վերադարձաւ։

—Լահէի օսմ. դեսպանատան Բ. քարտուղար Հիւսէյին պէյ միեւնոյն պաշտօնով Լոնտոն փոխադրուած է։

—Իզմիրի մէջ անցեալ օր Ռէժիի դէտերը հանդիպեցան մաքսախոյսներու խումբի մը որ մեծաքանակ ծխախոտ կը փոխադրէին։

Կռիւը սկսաւ բնականաբար. ասպարէզին վրայ մնացին դէտ մը և երկու մաքսանենգ, միւսները փախան։

—Պոլսոյ ռուսական ընդհ. հիւպատոսարանին Ա. թարգման Մ. Ժօռժ Պաթիուչքոֆ Դեհրանի ռուս դեսպանատան Բ. քարտուղար նշանակուած է։

—Զարիպրօտէ կը հեռագրեն թէ Բարիզէն եկող արեւելեան ճեպընթացը 10 ժամ ուշ պիտի հասնի։ Հետեւաբար այդ կառախումբը այսօր Պոլիս կը հասնի իրիկուան դէմ։ Յապաղման պատճառը չգիտցուիր։

—Վիէննական Բոլիդէյնէ Բոլէսլաֆոնդէնի և Բէլլէր Լոյդի թղթակիցը Մ. Մաքս Միթլէր քանի մը օրէ ի վեր Պոլիս կը գտնուի։

—Ֆրանսական Վաբիէնի յածաւորակը Իզմիր հասաւ։

—Ռէժիի Պոլսոյ դէտերը նախընթաց օր Պոլսոյ մէջ գրաւած են 100 օխա ածուխ Էրէյլիէն եկող Մէճիտիէ շոգենաւին մէջէն։

—Նախընթաց գիշեր, Բերայի Վենետիկ փողոցը ծագած հրդեհէն Սրն ապահովագրական ընկերութիւնը 300 և Հէլլէթիա 700 օսմ. ոսկիի կորուստ ունին։

—Անցած հինգշաբթի Իզմիրի մօտերը Ռէժիի դէտ մը ծանրապէս վիրաւորեց երիտասարդ մը զայն խուզարկած տեղն. երիտասարդին հայրը օգնութեան հասաւ տղին, բայց դէտը ատրճանակի հարուած մը տալով անոր կուրծքին գետին փռեց։ Մարդասպանը ձերբակալուեցաւ։

—Նոյեմբ. 28ին Միտիլլի, Վաթուսա գիւղը, Տօքդ. Կոժօի տունը գողեր մտնելով, վիրաւորած են անոր կինը և 300ոսկի ու թանկագին իրեղէններ տարած են։

—Վիւրթեմպերկի Իւլրիխ իշխանը որ քանի մը օրէ ի վեր Պոլիս կը գտնուէր, երէկ Ցունատան ուղեւորեցաւ։

—Պերլինի թերթը կը գրէ թէ Վեհ. Սուլթանը ներում շնորհած է Ֆուատ Ասլան անուն անձին, որ հեռագրական խնդրի մը համար երկու տարուան բանտարկութեան դատապարտուած էր։

—Մեծ պետութեանց դեսպանները, փոխանակ նախընթաց օրուան երէկ նիստ ըրին, գերմանական գործակատարը չկըրնալով առջի օրը ներկայ գտնուիլ։

—Խրիմի Թէրճիմանին մէջ կը կարդանք. «Աւստրիոյ հպատակ սերպերը սկսած են բողոք բառնալ տեսնելով որ Թուրքիոյ հպատակ սերպերուն խել մը առանձնաշնորհումներ կը տրուին։ Սերպիոյ թերթին Պոսնայի թղթակիցը կը գրէ. կը լսենք թէ Թուրքիոյ մէջ սերպ վարժարաններ կը հաստատուին. ասոր հանգէպ եթէ նկատի առնենք մեր, Պոսնայի վիճակը, լալ պէտք է։

Աւստրիա նոր վարժարաններու բացումը արգիլելէն զատ, կը չնայ եղածներն ալ գոցել. օրինակի համար Օգէրին վանքին դպրոցը գոցուեցաւ։ Միայն այս բանին համար չէ որ կը նախանձինք օսմ. վարչութեան. Աւստրիոյ դատարաններուն մէջ արդարութիւն ալ չկայ։»

—Մաքսատանց վերատեսուչ Նազիֆ բաշա երէկ Բ. Դուռը երթալով տեսակցեցաւ Բարձ. Մեծ-Եպարքոսին հետ։

—Արտաքին գործոց նախարարութեան թղթակցութեան դիւանին տեսուչ Ֆուատ պէյ քանի մը օրէ ի վեր անհանգիստ ըլլալով, տունը կը մնայ։

—Զաթալճայի գաւառին Ա. հաշուակալ քարտուղար նշանակուեցաւ Ելեւմտից նախարարութեան Տասանորդի ընդհ. տեսչութեան քարտուղարներէն Հիւսնի պէյ։

—Նոյմբ. 17, երկուշաբթի կէս օրին Պէրլինի մէջ ջերմաչափը 16 ½ կը ցուցնէր։

—Իզմիրի աւստրիական ընդհ. հիւպատոս Մ. տը Եանքօ, որ Հանր. Պարտքի աւստրիացի պահանջատէրներու փոխանորդ կարգուած է Մ. Բրինսկի Հէրօլտի տեղ, արձակուրդով Վիէննա դացած է։ քիչ առաջուն Իզմիր պիտի դառնայ և քանի մը օրէն ալ իր նոր պաշտօնատեղին, Պոլիս պիտի գայ։

—Աքեաի կառավարիչ Հիւսէյին պէյ Պէրլին գացած է, ինչ ինչ խնդիրներու մասին կուսակալէն հրաման ստանալու համար։

—Անգղիական Իմոյէն պահականաւը վաղը Մալթա կուղեւորի. յառաջիկայ փետրվարին Պոլիս պիտի դառնայ։

—Դեկտ. 4ին Այվէրանիսի (Սերպիա) մէջ երկրաշարժի սաստիկ ցնցում մը զգացուած է։

—Անցած ուրբաթ, Շիրէցի Տիմիթրի նաւապետին եռակայմ նաւը, 1300 տոկառաչափ տարողութեամբ, Թանկարոքէն ցորեն բեռնալով Պոլիս եկած ատեն, Շիլէէն երեք ժամ հեռու, Այլաճա-Գորտօնի առջեւ ցամաքին զարնուելով կտոր կտոր եղաւ. նաւապետը եւ եօթը նաւաստի խեղդուեցան. միայն երեք նաւաստի կըրցան ազատիլ։

—Երէկ, Կէտիկ Փաշա, Տիվան Ալի թաղին տուներէն մէկուն մէջ, լպուտ մը բամպակ գրած ատեն, բամպակին մէջ ինկած լուցկի մը բռնկելով բամպակը կրակ առաւ և լպուտը երեսին մէկ քանի տեղերէն այրեցաւ։

—Անցեալ գիշեր, Սալմաթմրուքի մէջ, Լէֆթէր, Հիւսէյին և Լէոն անուն վատահամբաւ անձեր, Քիլիտ Զէյմէ փողոցը Գրիգոր անուն մարդու մը հանդիպելով ծանրապէս վիրաւորեցին զայն։ Լէֆթէր ձերբակալուեցաւ։ Ընկերներն ալ կը փնտռուին։

—Թ. Հագիֆաֆ կը հերքէ մէկ քանի եւրոպական թերթերու տուած լուրերը, որոնց նայելով, իբր թէ Մակեդոնիոյ մէջ շարժումներ կըլլան և թէ նոյն իսկ Բիգա պէյ անուն մէկը 10—12000 ապստամբներէ բաղկացած գունդ մը կազմած է։

—Երէկ գիշեր ժամը 2ին ատենները, Սկիւտարի Տէպպաղլար թաղը, կնոջ մը տունէն հրդեհ ծագեցաւ, բայց հասած անմիջական միջոցներուն շնորհիւ տան մէկ սենեակը այրելով հրդեհին առաջքն առնուեցաւ։

ՎԻՊԱԿ

Մեր ուրբաթ աւուր թուոյն մէջ Հանրային Պարտքի Վարչութեան վերաբերեալ յօդուածի մը մէջ փոխանակ Համտի-Տանիշ պէյի սխալմամբ յիշուած էր Համիտ-Տանիշ պէյ։

Վակիպան

ՂԱԼԱԹԻԱ, 26 Նոյեմ. 97

Օսմ. Քոնսոլիտ	ղրշ.	24—01
Բէժիի պարտաթուղթ	լիրա	13—25
Բուսէլիի երկաթուղի	ֆրգ.	111—75
Օսմանիէ	»	394—
Բռիօրիթէ	»	461—
Քարափներու պարտաթղթ.	»	461—
Թրամուէյի բաժնեթուղթ	լիրա	7—07
Օսմ. Ապահով. Ընկ.	»	4—05

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ	Ղրշ. Բ.
Մէճիտիէ	108—
Մէթալիք	94—20
Մանր արծաթ	103—
Անգլիական ոսկի	109—36
Գաղղիական »	87—07
Գրիմից	51—07
Բուպլ թղթադրամ	8—55

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏՐ Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396 ՄԵԾ ԲՈՂՈՑ ԲԵՐԱ 396

(Եռանի ֆաբէզբաղան վրայէ յարէնը, ծէնը Զբաղոֆէեանց դէմն)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստոյգ ցաւած ակառաներն մէկ անգամէն կը լեցնեն. ցաւով դնել և բոժոժած վերդառնալու պայմանաւ։

Նորահնար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր, և դիմացկուն արհեստական ակառաներ կը պատրաստեն, յար և նման բնականի, դէմքի յեռաւորութիւն ըստ դէմքի, ծամաքնիկ, և ատամաքնիկ երաշխաւորեալ։

Բերանի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին, ինչպէս նաեւ թրմբրեցուցիչ դեղերու և ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն։

Ց. Գ. Ըստ Ամերիկեան ձեւերը կիրակի օրերն այ, (ինչ- կէս օր) ինչպէս նաեւ ամէն օր, (ինչ- կէս էջէր) հիւանդ կընդունին Բերայի գործատեղին։

Գատրգիւղցիք կրնան դիմել իւրեանց բնակարանն, ին- 1 Խրիսթիէի փողոց։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ԲԱՐԻԶ, 7 Դեկտ.—Այսօր Ծերակոյտին մէջ տեղի ունեցաւ Տրէյֆիւսի խնդրին համար ծանուցուած հարցապնդումը։

Մ. Շերբը Բէսթնէր բեմ ելաւ. խնդրեց որ նախարարապետը եւ պատերազմական նախարարն ալ հարցապնդուին։

Ծերակոյտին Նախագահը յայտարարեց թէ Տրէյֆիւսի անմեղութեան ինչպէս նաեւ նոր յայտնութեանց զայն հաստատելուն համաձայնութիւն չի գոյացուցած։ Կը յուսայի թէ, ըսաւ, Պատերազմական նախարարը բեմ ելաւ և յայտարարեց թէ հակառակ Տրէյֆիւսի խնդրին շուրջ եղած զրոյցներուն, կը հաստատէ անոր յանցապարտութիւնը։ Ըսաւ թէ Շերբը-Բէսթնէր և Տրէյֆիւսի պաշտպանել կուզեն Տրէյֆիւսի խնդրին վերաքննութիւնը անուղղակի կերպով մը։

Մ. Մելին կրկնեց իր յայտարարութիւններնները զոր ըրած էր երեսփոխաններուն առջեւ։ Ըսաւ թէ առ այժմ Տրէյֆիւսի խնդիր չկայ, այլ զինուորական պաշտօնեաներու մեծ մատնութիւն մը։ Զինուորական ատեանը անկախօրէն պիտի կատարէ իր պարտականութիւնը։

Նախարարապետը կառավարութեան համար վստահութեան քուէ խնդրեց ապա, որ տրուեցաւ միաձայնութեամբ։

ՀՌՈՄ.—Բաղմաթիւ թերթեր խօսելով Քիաու-Զէուի գրաւման գերմանացիներուն կողմէ, կըսեն թէ յուսալի է որ Ֆրանսա, Ռուսիոյ քաղաքականութեան հետեւելով, ո եւ է ընդդիմութիւն պիտի չընէ, որովհետեւ Գերմանիա մինչեւ ցարդ փոխարինութիւն մը չէ ընդունած այն աջակցութեան համար զոր երբեմն տուաւ երկու Նիզակակիցներուն Ծայրագոյն-Արեւելքի մէջ։

ՄԱԴՈՅԻ ՄՕՌԻԻ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Կ. Պոլիս, 15 Սեպտ. 1889

Պարոնայք Սգոյ և Պուն,

Յարմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Սգոյն կշռարկը, մինչ լաւ արդիւնքներ ունեցայ մանաւանդ խուլերու և անարիւնութեան հիւանդութեանց քանի մը դեպքերու մէջ։

Իմ կարծիքս է թէ այս հանդոյ և յարմար պատասխանութիւնը մինչ նախամեծար համարուելու Ցաւելու ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն։

ՏՐ. Ա. ԱՆՏՐԻԱՍԷՍ

Նախկին բժիշկ Օսմանեան բանակի

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐԵԱԼ

ԶԳԵՍՏԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊՈԼԻՍ, Սուլթան Համամ ՀանՕրուլ Խան (Թիւ 20

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Այն նորահաստատ վաճառատան մէջ յոյժ չափաւոր գնով ամէն տեսակ պատրաստ և հաստատուն զգեստներ կը գտնուին։ Զափու վրայ զգի փոքր տարբերութեամբ զգեստներ կը կարուին։

ԼՈՒՍԻՆ վաճառատան մէջ ծախուա պատրաստ զգեստեղինաց համառօտ մէկ ցուցակն է.

Բրտէ-կօթ գոսթիւմ	170 էն	250	Ղրշ.
Զաքէթ	70 »	230	»
Բալթօներ	50 »	230	»
Բանթալոններ	25 »	50	»

(Թիւ 226)

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ աւելի քան միջդար առաջ, սոսկ հրդեհի ապահովագրութիւն մէջ՝ որոյ բաժնետէրք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ գրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 20,000,000 Անգլիական ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի ցնաներուն համար։

Հիմնեալ ի Լոնտոն՝ յամին 1782

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանաք և միջնորդութեամբ ստորագրելոց, որ ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած ցնասները։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ.Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ Ծովու եզերաց, Ղալաթիա, Պանք Օթոմանի վարի քովը Վիթալիս խան, գետնայարկ թիւ 1։

PAPIER FAYARD ET BLAYN

Կը բուժէ հարբուխը, կուրծքի բորբոքումները, յոգնացաւը, ճմլում, վերք և լն։ Աննման դեղ այտուցներու և կոշտի համար։

Կը գտնուի բոլոր դեղարաններու մէջ. (փնտռել մեր ստորագրութիւնը)։

ԼՈՆՏՈՆ ԵՒ ԼԱՆՔԱՇԻՐ

ՀՐԴԵՀԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1862 Ի Ն

ԴԱՄԱՄԱԳԼՈՒԽ 2,127,500 ԱՆԳԼ. ՈՍԿԻ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՈՒՕԼԴԷՐ ՖԻՆՃԷԼ

Հէլլէ Խան, Թիւ 2—3, Վոյէվոտ Խուրշ, Ղալաթիա

Առաջնակարգ Ընկերութիւն մ'է սա, իր առատաձեռնութեամբ, ճշդապահութեամբ և պատուաւորութեամբ համբաւաւոր։

ՔՆՆԻ ԹԷՈՏՈՐ ՍԹԷՖԱՆՈՒ

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄԲՈՒՐԳ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆունտ	14,500,000
Պահեստի դրամ	»	21,173,000
Ցարդեկան հասոյթ	»	44,820,000

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՒԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեմ մեր [illegible] և ակուներ և սոյա մէջ գտնուած վառելիքներ և կարասիներ [illegible] չափաւոր սակա[illegible]ով

572 Լիազօր Նեքսպարդուքներ՝ [illegible]

ԳԱՌԼԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահէջ—Գալաթա, Ընանիատիս խան 12, 4

ԹՐԻԱՆՏԱՖԻԼՕԲՈՒԼՕ ԵՂԲԱՐՑ ԸՄՊԵԼԵԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Մասիլիա-պիլ

Գալաթիա, ՄՕՍՄԱՆԷ ճատտէսի, թիւ 69

Սոյն գործարանը, բացուած 1878ին, կը ծախէ ամեն տեսակ մասթիքա և տիւղ, զուտ խաղողէ շինուած։

Թրիանտաֆիլօբուլօ եղբարց օղին, օժտուած հաղուագիւտ յատկութեամբ ու ճաշակով, ախորժակը կը բանայ, ջիղերուն ուժ. և մտքին կորով կուտայ. նրբաճաշակ խմողներուն կը յանձնարարուի Թրիանտաֆիլօբուլօ եղբարց օղին, որ կը ծախուի գոցուած և կնքուած շիշերով։

Դիմել. Բերա Եանի, Հէլվէցիա, Պէզանս, Կամպրինօս գարեջրատունները, Բաբատօքուլօ, Բաբանօքուլօ, Գրիցալի, Գրինիգօս, Մարսիլիա և Տիմիթրաքօքուլօս նպարեղէնի վաճառատունները, Թարլապաշի 65 և 170 թիւ ըմպելեաց մթերանոցները, Սիրքէճի Վասիլիատի և Զօգաղարեջրատունները, Պալըք բազար Ֆիլօքսս և Լէթասի խանութները, Լիմոն իսկէլէսի Պէլիրինի մթերանոցը, Պէշիքթաշ Անէսմի, Պագարի և Բանճօքուլօսի խանութները։

COMP. RUSSE DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՇԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթևեկութիւնք

Թշ. 24|6 Օտէսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։

Գշ. 25|7 Ալեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակ ժամ 2ին յետ միջօրէի, Պիրէոնի ճամբով

Երկ. 26|8 Սուրհանդակ դէպի Փոքր-Ասիոյ նաւահանգիստները մինչեւ Պաֆլա, առաւօտեան ժամը 11ին։

Երք. 26|8 Սեվաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամը 10ին։

Հնգ. 27|9 Օտէսայի սուրհանդակ, ժամը 2ին յետ միջօրէի։

Ուրբ. 28|10 Աղեքսանդրիոյ Սուրհանդակ, հան ի Սուրբոյ նաւահանգիստներ։ [illegible] շաբաթը անգամ մը ժամը 4ին։

ԱՌԴ. — Նոյ, 25|7, երեքշաբթի օրը Կ. Պոլսէն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ուղեւորը Զմիւռնիոյ մէջ տիտի հանդիպին Թրիբոլի, Պէյրութ, Եաֆա ու Բոր-Սայիտ գացող շոգենաւին։ 563

ՇՈԳԵՆԱՒԱՇԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐ ԱՅՆ և ՄԱՐՍԻԼԻԱՅԻ Ի ԲԱԳԻ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Պոլսոյ միջև [illegible] ֆրանսական բեռնոց

Ա—Դէնի չոգենաւը ուղղակի Մարսիլիա՝ պիտի ուղեւորի դեկտ. 14ին (Ը. Ե.)։

Բաքիր-Լիման-Մարսիլիոյ երկաթուղիով ուղեւորութիւնն ի միասին առնելով,

Ա. կարգ 245 ֆրանկ

Բ. » 175 »

Ուղղակի և ապահով ուղեւորներու նաւուղէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար ԹԻՄՈԹԷ ԲԸՂՈՒԼ

Մահմանէ փողոց թ. 10

575

EMULSION SCOTT

ՍԿՕԹԻ ՕՇԱՌԱԿԸ

Գործարանին նշանը

ախտարհի մէջ լաւագոյն դեղն է

ԵՐԱԽԱՏԵՐՈՒ ԵՒ ՏՂԱՅՈՑ

ամէն տեսակ հիանդութեանց համար։

Ամենէն ախորհամ ձկան իւղն է «իրոֆոսֆիթ ոը շօ է ոը սուտ» հետ խառնուած։ Տղայք հաճոյքով կ'ուզեն ճաշակեցնել։ Բնաւ ուրիշ դեղ մը ասոր չափ արդիական չէ, բուելու համար

ՀԻՒԱԾՏԸ, ԽՈՑԼԸ (սրրաճ),

ԱՆԱՐԻԽՈՒԹԻՒՆԸ, ԾԻՒՐՈՒՄԸ,

ՄԱՆԿԱՑ ՈՍԿՐԱԹԵՐՈՒԹԻՒՆԸ,

ԸՆԴՀԱՏՈՒՐ ՎԱՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ,

ԹՈՒԼ ՏԿԱՐՈՒԹԻՒՆԸ, ՀԱՋԸ,

ՀԱՐԲԻԽԸ, ՆԻՀԱՐՈՒԹԻՒՆԸ,

և ԱՄԷՆ ԵՍԱԿ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կը ծախուի բոլոր դեղագործներուն և դեղավաճառներուն քով։

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

ԲԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ

906,000,000 ՖՐԱՆՔ

Ֆնոլէնտ-Ամերիկա յԵ-բրոպա

Փարիզ, 16, Պուլվար տէ գ'Իթալիէն. 1,3, իր Լը Բէլլիթէ փողոցի սեփական շէնքին մէջ

1845ին հիմնուած է Վէր

Ապահովագրութիւններու վճար. 1 Մէլիոն 123,000000

1895ի դեկտեմբեր

Ապահովագրեալներու վճարուած	87,000000
Հասոյթ	196,000000
Նոր ապահովագրութիւնք	661,000000

1896 յունուար 1

Աւանդ եւ անշարժ կալ. յԵւրոպա	40,00000
Ցաւելեալ դրամագլուխ	124,00000
Արդի ապահովագրութիւնք	1 Մէլիոն 141,00000

Տնեղերական ապահովագիր

Շահաբաժիններու բարդմամբ և ապահովագներու վերադարձմամբ՝ ի դէպ մահու

Պայմանագրութեան նոր եղանակ

սկսեալ Առաջին տարւոյն լրանալուն պէս։

ԱՌԱՆՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԻ ի մասին բնակութեան և ուղեւորութեան.

Հինգ տարի ետքը ԻՐԱՒՈՒՆՔ տալով ընկերութենէն փոխառութիւններու որոց գումարը նշանակուած է ապահովագրին մէջ աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար դիմել առ Տնօրէն-Ընդ. Թուրքիա

188 Ճ. ՈՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.

Վոյվոտա վ[illegible]ոց, Վ[illegible] խան, Ղալաթիա

Գրասենեակք [illegible]

ԹԵՐԹՕՆ «ՄԱՍԻՍ»ի (68)

ԹԱՔՈՒՆ ՎԻՇՏ ՄԸ

ՊԷՌՆԱՌ ՏԸՌՕՆ

—Ատուած տար, որ կրնային փախչիլ. ան եղաւ Բէդի ջերմեռանդ աղօթքը, երբ ակնարկ մը դարձուց ծովահէններուն կայծակնացայտ աչքերուն և դաժան դէմքերուն։

Լուսինը ելած էր այդ միջոցին իր բոլոր շողարձակ շքեղութեան մէջ, ծովուն ջուրը ողողելով իր արծաթէ լուսին մէջ. ցերեկուան պէս կարելի էր ամէն բան յստակ տեսնել, մինչդեռ հրոսակներուն նաւը կը մօտենար վաճառական նաւուն։

Երբ մարդերը կամուրջին վրայ կանգնէին կը դառնային, իրենց զանազան աշխատութիւնները կատարելու համար, Բէդ նշմարած էր գժգոհութեան այն նայուածքը, զոր իր վրայ կը ձգէին, խուլ մռունչի մը և խեղդուկ յիշոցի մը միացուցած։ Հակառակ ասոր, նէ այնքան խորապէս յուզուած էր հաղածանքէն և մօտաւոր բաղխումին մտածումէն, որ չէր կրնար կամուրջէն հեռանալ։

—Հոդ չէք կրնար կենալ, վտանգը մօտալուտ է, վար իջէք։

Բէդ վեր առաւ աչքերը. Ռէյմոն հրամանատարն էր որ այդ բառերը արտասանած էր անցած առեն։ Անոր աչքերը լեցուած էին կենդանի բոցով մը, և անոր ձայնը հրամայող շեշտ մը ունէր, զոր մինչեւ այն առեն չէր լսած։ Սակայն նէ կը յամառէր մնալու, բանի տեղ չդնելով ծովահէններուն վայրագ մռունչը, որ երթալով կը բարձրանար իրեն դէմ։

Անգլիական նաւուն բաղդին ականատես ըլլալու փափաքը կը յաղթէր ամէն զգացումի, և նէ մնաց հոն։

Հիմա իրարմէ շատ քիչ հեռու էին երկու նաւերը և Բէդ գրեթէ կրնար որոշել բազմաթիւ մարդեր, որ վաճառական նաւուն կողերուն կրմնած էին։

—Հոդիս վկայ, գիշերային լաւ աշխատութիւն մը պիտի ըլլայ ասոնց, աղաղակեց հրամանատարին ձայնը, Բէդի գտնուած տեղէն քիչ մը հեռու։ Գեղեցիկ պայքար մը պիտի ունենանք։ Ահ, դրօշակը կը բարձրացնէ։

Երբ կը խօսէր, դրօշակը ծածանեցաւ պահ մը վեր բարձրանալով, և Ս. Գէորգի խաչը երեւցաւ հպարտօրէն կայմին ծայրը։ Վարկեան մը յետոյ թնդանօթի հարուած մ'արձակեց։

—Քաղաքավար ազդարարութիւն մըն է ասոնց մեղի, որպէս զի ինքզինքնիս ցոյց տանք. հէ՛, Սիմոն, բաշէ սեւ դրօշակը։

Աղաղակ մըն է բարձրացաւ նաւաստիներուն մէջ ու բոպէ մը յետոյ չարագուշակ սեւ դրօշակը, իր դանկով և խաչաձեւ երկու ոսկորներով, ծածանեցաւ գիշերուան զով օդին մէջ։

Մեռելական լռութիւն տիրեց վարկեան մը, յետոյ Բէդ կարծեց թէ յուսահատական աղաղակ մը կը լսէր վաճառական նաւէն։ Սակայն կրնայ երեւակայական ըլլալ ասոնց, զի քիչ յետոյ կռիւի հրաւիրող ահեղնագոչ աղաղակ մը լսուեցաւ անգլիական քաջարի նաւէն։

—Ստատանները վկայ, որ իրենց այդ պարծենկոտութեան համար պիտի զղջան, գոչեց հրամանատարը, որ խենթ կորած էր ասպարէզ կանչուելէն։ Է՛, մարդերս, ձեր դործին գլուխը. նախ և առաջ ետեւի կողմէն պիտի յարձակինք։

Աւազակները փութացին հնազանդիլ այդ հրամանին և Ռէյմոն հրամայեցաւ նաւարը մօտեցաւ հոն, ուր Բէդ կը կենար միշտ։ Տեսնալուն պէս զայն, յառաջացաւ և բաւ խօսաբար.

—Ինչո՞ւ համար կը մնամ այդ-չափ, չէ՞ք տեսնար որ ընկարդութեան շրժառիթ կըլլաք մարդերուս մէջ։ Վար իջէ՛ք։

Բէդ չհամարձակեաւ այլեւս անսստելու։

Ակնարկ մը նետեցի վաճառական նաւուն վրայ, նէ հեռացաւ և խուցը իաւ։ Սիրտ կը կենար հոն, ձեռքերը մացուցած, աչքերը ակնակապիճները դուրս ինկած ըսեմէ, մտիկ ընելով ուշադիր դուսի աղմուկը. Բէդ ծունգի եկաւ և ծծկեց դէմքը ձեռքերուն մէջ, և խորը սարսափով համակ դաւուած, սպասց կռիւին սկսելուն։

Մէկ քանի վայրկեանները որ անցան, դարերու չափ թուար երեւցան իրեն։ Ղլսէր խուճապը երթեւեկներու աղմուկը, բազմաթիւ ոտքերու դիմաւորը, ձայներու խառնիչիոյ աղաղակը. հրամանատարին ձայնը կը լսուիր անոնց, փոորի մը ձայն չափ յստակ ու որոշ։ Դակուած մնաց սարսումը անտանելի դարձաւ։ Բէյի եռանդուն բնաւորութիւնը ընդվզեցաւ, դառագելի մէջ թանտարկուած առիւծի մը պէս։ Ոտքի ելլալով շուտ մը, աղաղակեց վերջապէս։

—Դուրս ելլալ կուզե՛մ։

Եւ զգուշութեամբ վեր ելաւ խուցին սանդուղքն։

Հո՞ն, մութին մէջ կծկուած, կը պատրաստուէր տեղաւորուելու, երբ խլացուցիչ թնդիւն մը, որպէս թէ երկինքը կործանած ըլլար, դպաւ իր ականջին։ Վաճառական նաւը, եռին դառնալով յանկարծ, թնդանօթներ պարպած էր ծովապատակ նաւուն վրայ։

Վարկեան մը օդը լեցուեցաւ մեռնողներու աղաղակներով և վիրաւորներու հեծեծանքներով, պողպատին շաչիւններուն և հրազէններու պայթումին խառնուած։ Դատապարտուած նաւուն կամուրջը բաւին իսկական նշանակութեամբ արիւնով կողողուեր, և զայն պատող ալիքները արիւն էին համակ, կասկարմիր։

—Ցառաջ, մարդերս. զարկէ՛ք, ոչինչ մի խնայէք. գոչեց ծովահէններու պետին ահեղ ձայնը. մինչդեռ ալոյեան նաւուն ճամբորդները կիյնային իր գեղարդին հարուածներուն տակ, ինչպէս խոտը գերանդիին տակ։

(Շարունակելի)